Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn 1 tity

Nuppklnp.

Ltn
769

ՀՆՉ. ՅԵՂԱՓ. ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏ. Կ.-ԹԻՒՆ

Պրոլետարիներ բոլոր երկրների՝ միացէ՛ք:

ԼԵՈՆՆԵ

ԴԱՐԲՆԵՒՈՐ

ԼԻՑ
ԳՐԱԴԱՐԱՆ

Հրատ. «ԸՆԿԵՐ» Մատնամատեանի

No. 5

ՐՈՒՍԱՀՈՒԹ
Տ. Ալրան „Վերածնութիւն"-ի
1904

ԼԵՈ
769

1999

ՀՇՉ. ՅԵՂԱՓ. ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏ. Կ.-ԹԻՒՆ

Proletarianներ բոլոր երկրների՝ միացէ՛ք:

ԼԵՌՆՑ

ԴԱՐԲՆԵՒՈՒՐ

ԳՐԱԴԱՐԱՆ

Հրատ. «ԸՆԿԵՐ» Մատենաշարի

No. 5

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՀ-ԲՍՀ.ՍՍՀ

ՐՈՒՍԱՁՈՒՐ

Տպարան „Վերածնութիւն“-ի

1904

Գ 764-60
Հ Գ 771

ԴԱՐԲՆԵՒՈՐ.

Վառուում է հընոցը,
Ժայթքում են բոցերը.
Գոլծում է դարբնոցը,
Գործում են կըրակն ու կայծերը.
Հուրերի չտեմարան,
Հուրերի սանք ու հողմ,
Դարբնոցն է վառարան.
Կըրակի լոյսն ընկած ամեն կողմ:
Զա՛րկ, պի՛նդ զարկ, դարբնեւոր.
Հաստատ է քո գնդան. . .
Եւ մուրճի ծանրու թեան
Տակ ձայնում է թնդոց ամաւոր:
Շիկացած երկաթը.
Ասես օձ կըրակի,
Դէպ վեր իր սապատը
Օղակով է կեռում,
Կամ ձգում չեչտակի. —
Աչխատանքը երկաթնէ կըռում:

•

Գործում է դարբնոցը. —
կայծերի շատրւան գործատու :
Զնդանը մուրճի տակ եւ բոցը
Եւ քանքարը մարդու
Ստեղծում են միատեղ
Գործը մեծ եւ անեղ
Կառուցման, աւերման —
Եւ կեանքի, եւ մահւան :

•

Ծխնելոյզի բերան
Դարձել է կրակարան .
Բոցերը բարդ սիւնով
Ժայթքում են դէպի վեր
Հրաբխի իբր լաւեր :
Մինչդեռ թանձրը ձիւնով
Շուրջ դաշտն է ծածկուած —
Ըսպիտակ սաւանի մի զանգուած :
Հորիզոնն իրիկւան
Կախուած է քընաթափ :
Թըմրած գիրկը մահւան՝
Ամպամած երկինքն է անքնաթափ :
Աղօտ, միապաղաղ

Մի լոյս է շուրջ տիրում :
Ամայի ու խաղաղ ,
Ձիւնի տակ սկայ դագաղ՝
Երկիրը թաղուած է ամպերում :

•

Գործում է դարբնոցը :
Դրսան դէմ հընոցը՝
Դէպի դուրսն արնագոյն
Շերտով է լոյս թափում :
Հրդեհի է հանգոյն ,
Որ դարբնոցն է լափում :
Արնալոյս հուր ու բոց ,
Զնդանի զարկ, թնդոց —
Սոսկ կեանքն է չարաշուք
Այն դաշտում անշըշուկ,
Ամայի, խուլ, անվերջ ,
Ամպի տակ, ձիւնի մէջ :
Գործում է դարբնեւորն առոյգ դէմքն այրուած,
Իջեցնում է հարուած
Հարուածի ետեւից, թնդացնում է շէնքը ,
Եւ ստեղծում է զէնքը :
Այդ երկաթը, որի շեղբն ասես
Բոցի պէս

Ն Ի Ա Դ Ա Ր Ա

Զգում է սպառնական սուսերով,
Իրա մէջ կըրում է ջարդուած յոյսերով
Տանջանքի ընթացքը ողջ մարդկան պատմութեան
Ծոցումը դարերի մըթութեան:
Ցաղթանակը մահուան
Սուսերի ծայրին է գողի պէս թաղնըւած,
Արնանեղկ սկայ սատան
Սուսերի ծայրեցն է մարդկութեամբ հագնըւած:
Երկրագունտը նրա տակ ելնում է ահեղ թունդ
Մինչեւ իր արգանդի խոր անդունդ,
Աստղերը գունատւում, երկինքը մըթագնում,
Ողջ աշխարհը սեւ սուգ է հագնում,
Մարդը մա՛րդ է սպանում,
Մա՛րդ — ստեղծո՛ղը մարդի,
Կոյր հարւածն նրա ցեղն է եղծանում,
Որ մահն իր ճանապարհը հարթի:
Ատելութիւն, նախանձ, ոխ, սին փառք,
Ագահ տենչ, ցասում, քէն, ամենայն մոլի բարք,
Կապւելով միմեանց հետ չղթայով ամրապինդ,
Ծորելով իրանցից կրքերի մոլեխինդ,
Պատառում են, ջարդում բազմատանջ
Մարդկան լանջ,
Մինչ անարգ չղթայի սարկական կապանքը
Խորտակում մարդկութեան ազատ ու սուրբ կեանքը:

Իրաւունքն՝ ոտնակոխ, բերրա ոյժը՝ յաղթական,
Օրէնքը՝ խարազան,
Լոյսն, արդարը, մեծը՝ ապարտւածնե՛ր մշտական,
Մարդը, մա՛րդն էլ՝ գազան . . .

•

Գործում է դարբնոցը . . .
Վեր քաշած թեւ հոցը՝
Դարբնեւորն աւելի ուժգնութեամբ,
Զըղային սառակութեամբ
Զարնում է իր մուրճը
Զնդանին, եւ չուրջը
Ցայտում են բոցերը . . .
Ցայտում են կայծերը
Նրա աչքից,
Եւ կրծքից
Ցանկարծ դուրս է սողում հառաչանք —
Զայրոյթի խոր տանջանք:

•

Բայց լ՛ռչ. . . Ա՛հ աշխատանքն, ըստեղծի՛չ, արարի՛չ
Մարդկային կենցաղի,
Դարձե՞լ է մարդկութեան գոյութեան աւերի՛չ,
Թաւալելով նըբան մինչ չէմքը դագաղի:

Ի՜նչ, դաշտի ծաղիկը արիւնո՞վ է ներկւած,
Մինչ աշխատաւորի ձեռքով հողն է հերկւած։
Կենսատու արեգակն իր անմահ ջերմութեամբ,
Իր լոյսի յարատեւ թարմութեամբ,
Որ կեանք է պարգեւում բընութեան
Բեղմնաւոր արգանդին,
Ի՜նչ, ըսկսած հընութեան
Խորերից, հակառակ իր խանդին,
Դիերի լեգէօն է տեսնել իր տակը՝
Մինչ լեռան բարձունքը, մինչ ծովի յատակը։
Ի՜նչ, մարդու սուրբ կեանքն ակռաւի՞ն խրախճանք.
Գիշատիչ անգղի ճանկ
Ա՛յն սիրտն է խոցոտում, որ ունէր իր կեանքը.
Որ գիտէր զգալ, տանջւել ու սիրե՛լ...
Եւ այդ սիրտը մահւան սառ գիրկն է գըլորւել
Սուսե՛ր, որ ինքը՝ մարդու ձեռքն է ստեղծել
Եւ սուրբ աշխատանքի սուրբ օրէնքը կեղծե՛լ...
Աշխատա՜նք, ըստեղծիչ, արարիչ
Մարդկային կենցաղի,
Նրա բախտի, ծիծաղի,
Որ տալիս է նըրա հանճարին լայն թըռիչ,
Որ թանձրը քրտինքի ու սփոփիչ արցունքի
Աղբիւրից ստեղծում է վայելքն իր արդիւնքի,
Որ մարդկան ուղին է դէպ պայծառ ապագան,

Փրկութիւն յաղթական,
Ծոցը խաղաղութեան, սիրոյ ու բերկրանքի, —
Ի՜նչ, նա դեռ կըռում է չղթանե՞րը կեանքի,
Դեռ մա՞հ է, արի՞ւն է մարդկային,
Խողխողման դեռ զէ՞նք է դիւային. (փառք...
Ի՜նչ, զէ՞նք, որ կոչում են քաջութիւն, պարծանք,
Ա՜հ, այո՛, նըզովւած եւ արիւնախում բարք,
Եւ աղէտ, եւ անէծք, խաւար, ախտ, ոճիր, դա՜ւ,
Բայց արդարութի՞ւն — ո՛չ,
Պարտականութի՞ւն — ո՛չ,
Իրաւո՞ւնք, պատի՞ւ, գո՞րծ, լո՞յս, սէ՞ր, կեա՞նք—բնա՜ւ.
Այլ մարդը չարութեան է ըսպան,
Այլ մարդը՝ լոկ գազան, այլ մարդը՝ մարդասպա՜ն...

•

Գործում է դարբնոցը։
Ժայթքում են բոցերը։
Ժայթքում են կայծերը
Դարբնեւորի աչքից — նրա սրտի հընոցը...
Եւ մուրճի հարւածից մէկ ուժգին
Զնդանը թնդաց պինդ,
Սուսերի երկաթը հանեց խուլ մի շըռինթ,
Կոտրւեց, գըլորւեց ցած գետին։
Ձեռքին մուրճ,

Սիրտը լի վերքերով,
Նայեց չուրջ
Դարբնեւորն արնալից աչքերով
Եւ վայրի ոստումով
Թռաւ դո՛ւրս սոսկումով . . .

Սկայ դաշտն է տարածւած —
Ըսպիտակ մի գանգւած —
Ամայի, խուլ, անվերջ,
Ամպի տակ, ձիւնի մէջ . . .
Ամպի տակ, ձիւնի մէջ մի հսկայ ուրուական
Կանգնած էր թեւերը դէպի վեր,
Ծանրը մուրճը ձեռքին սպառնական
Եւ սիրտը բաղմավէր ։
Եւ թռչում էր, թէ նա ուղղում էր խիստ նըզովք
Դէպ անհուն հեռաստանն՝ ուր թագուն են դեռ բովք,
Դէպ ամպերը, որ դեռ արգելք են արեւի
Աւետման բարեւի . . .
Եւ մինչդեռ նրա տեսքն էր մարտական,
Նրա ձիչն էր՝ խաղաղութի՛ւն մարդկան . . .

ՎԵՐՋ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
«ԸՆԿԵՐ» Մատնամիրի

I Մ. Գորկի. Կեանքի Դիմաց.
Թարգմ. Անիրխան . . 3 կ.

II Մ. Գորկի. Գաբրիանային Մեղեդիներ.
Թարգմ. Անիրխան . 3 կ.

III Կ. Կաուցկի. Զարթուցիչ տօներ և տօներ կուռ. Թարգմ. Անիրխան. . 3 կ.

IV Ազգերի Մայիսեան տօնը, Թարգմ. Անիրխան 3 կ.

V Լեոնից. Դարբնեւոր (բանաստ.) . . . 3. կ.

ԳԻՆԸ

Ռուսաստանում . . . . . 3 կ.

Արտասահմանում . . . . . 10 սանտ.

Русе, печ. „Меркуръ."

ՀՀ Ազգային գրադարան
NL0108446